

տէր թէ վկայագիրը Պ. Ազ- նա. ի պիտի յանձնուի. երբ մէկ երկու օր վերջը նոյն վկայագիրը իրեն կը վերագրանուի ու իրմէ աւ- րիչ մը կ'ուզուի, շատ պարզ բան էր հասկնալ թէ առաջինը չէր ընդուն- ուած իր հարցումը աւելորդ էր :

Պ. Խնտամեան իր յօդուածին մէջ մէկը կ'ակնարկէ. ընթերցողք թե- րեւ զարմանան երբ ըսեմ թէ այդ ակնարկած անձը ստորագրեալն է : Այս առթիւ կը փութամ ըսել թէ հակառակ որ առանց վերապա- հուծեան իրողութիւնը պատմած էի, Պ. Խնտամեան, կերակի յիշողութե- նէն վրիպած ըլլալու կամ իր նախ- կին աշակերտին վրայ վատհալութիւն չունենալուն՝ ճշմարտութիւնը քիչ մը կը խեղաթիւրէ :

Ամեն պարագայի տակ՝ այս անգամ հրատարակել կը կրկնեմ ինչ որ ըսած էի արդէն. Պ. Խնտամե- անի. ու յարգելի ընթերցողներու ուղղամտութեան կը թողում որ դատեն :

Պ. Ազնաւոր ձեռք մը չէ որ արարեցին ուսուցիչը իր տունը բե- րել կուտայ, այլ զուգարիպութեան մը հետեւանք, ահա թէ ինչպէս :

Պ. Ազնաւոր Պ. Օ. Խնտամեանի յօդուածին աստիճան ազգուցելով՝ և կարծելով որ Ազգ. Վարժարանի արարեցին ուսուցիչը անկարող է արդիւնաւորելու, իր բարեկամներէն մէկուն կը խնդրէ որ արարագէտ և կարող ուսուցիչ մը ներկայացնէ իր. են. որքան մեծ կ'ըլլայ իր զարման- քը երբ ըսնի մը որ վերջ կը բարե- կամը կը ներկայացնէ արդէն իրեն ծանօթ Պ. Պուլթրոսը՝ որ իր կարգին չէ՛ր կրնար բացատրութիւն մը տալ այդպիսի գիպուածի մը :

Կեղծել անկարելի էր. հետեւ. ւարար Պ. Ազնաւոր Վարժար-Ա- րարը ցոյց տալով՝ կ'ընէ թէ Պ. Խն- տամեան իր դէմ աննպատակ յօդ- ուած մը հրատարակած էր :

Այդ անկարելի է. կը պա- տասխանէ Պ. Պուլթրոսը, քանի որ աշակերտներու վերջին ընտելեան արդիւնքը գոհացուցիչ էր և անոնց ստացած նիշերը կը ներկայացնէ. դիտել տալով որ արարեցին քննի- չը ինքն Պ. Խնտամեանն է եղած :

Միջանկեալ ըսենք՝ այդ զու- գարիպութիւնը պատճառ եղաւ որ Պ. Պուլթրոսը զարձակ իր պայտօնին վրայ մնայ և Պ. Խնտամեան իր յօդուածէն պատճառ օգուտը չի քա- ղէ սակայն նա յուսահատի չի գիտի որ տեսնելով որ իր յօդուածը անպա- տասխան մնաց, կը համարձակի երկ- րորդ մը հրատարակել, ուր վերջա- պէս մարզը երեան կուգայ :

Այն ատեն Պ. Ազնաւոր արա- բերէն ուսուցիչն ըսածը լաւ կեր- պով հաստատելու համար հակասա- գիր մը կը պահանջէ, և որովհե- տեւ այդ հակասագիրը Պ. Ազնաւորի ներկայացնելէ առաջ, զայն ինչ ցոյց տուաւ Պ. Պուլթրոսը, գրուածքը գոհացուցիչ չը թուելով ինչ որ ինչ մը ուղած ձևով յանձնարելու վեր- տուի՝ որպէսզի իր նպատակին ծա- առայէ. ուստի երբ մէկ երկու օր վերջ Պ. Խնտամեանի կը ներկայացնէ և կուզէ որ ստորագրէ փոխան ա- ռաջնոյն՝ ըսելով նաև որ զայն Պ. Ազնաւորի չէ՛ ներկայացուցած, Պ. Պուլթրոսը չէ՛ր ստի :

Ըսենք նաև որ Պ. Խնտամեա- նի յանձնած գիրը զարդ հակասա- գիր (declaration) մ'էր և ոչ վկա- յագիր մը ինչպէս կարծեցնել կուզէ՝ նախ որ Պ. Խնտամեան իրա- ւասութիւնը չունէր իր պաշտօնակ- ցին վկայագիր տալու և միւս կող- մանէ Պ. Պուլթրոսը իր արժանապատ- ուութիւնը ոտքի տակ պիտի չ'առ- ներ երբէք, իր օգնական-ուսուցիչն վկայագիր մը խնդրելով . . .

Պարզապէս չ'արգիւցնել փաստով մը հոգաբարձութիւնը համոզելու և թիրիմացութեանց տեղի չի տա- լու համար այդ հակասագիրը կը պահանջէ Պ. Խնտամեանէ՝ որ ընա- կանաբար կ'զգուշանայ իր քղիցիքը Վարժար-Արարի մէջ արդէն հրա- տարակած իր յօդուածին հետ հա- կասութեան մէջ դնելէ. սակայն դժբաղդաբար, նա չէ՛ր կրնար ըմ- բռնել թէ՛ յետագայ յօդուած մը իր ստորագրածին ըսողութիւն հակա- սականը պիտի ըլլար . . .

Չերկարենք, քանի որ Պ. Խն- տամեան արարեցին ուսուցիչն հրմ- տութեան և ձեռնահասութեան մա- սին գովասանականներ ունի միայն և թէ ըստ իր ստորագրած գրիին ին-

քն ալ հանգուցեալ ն. Մարտմեա- նի պէս կը հուսանայ թէ Վ. Պուլթ- րոսէն առաջ վարժարանին մէջ ա- րարեցին լեզուն գոյութիւն չունէր ա- ճելի չի ծանրանանք այս մասին :

Մեզ կը մնայ միայն Պ. Պուլթ- րոսի լաւ մէթոսի մասին մէկ հի- կու փաստեր տալ. ընկերներէն մին Պ. Խնտամեանի ներկայանալով ինչ- րեց որ մեզ համար արարեցին այցելու ուսուցիչ մը ցոյց տայ. նա առանց վարձուելու Պ. Պուլթ- րոսը կը ներկայացնէ զովորով անոր հետը ինքն իր մերտքը, չէ՛ր սխա- լած. ամեն տեսակետով միշտ գոհ մնացած եմ Պ. Պուլթրոսէն, և որ- քան բազմաթիւ նկատած եմ Ազգ. Վարժարանի այն աշակերտները՝ ու- ռունք Պ. Պուլթրոսը իրենց արարեցին ուսուցիչն ունեցած են :

Մէկ կողմ թողով վարժարան- ներ և շատ մը հարուստ և Ազ- նուական դասակարգի Պարտներ և Օրիորդներ՝ որոնց այցելու դասա- տուն եղած է և է՝ Պ. Պուլթրոսը, աւելի պերճախօս ապացոյց մը տը- ուած ըլլալ կը կարծեմ, եթէ ըսեմ թէ՛ ամենու ծանօթ Սէթեան էջի պէս հոտ փորձառու և կարող ու- սուցիչ մը՝ իր որդւոյն արարեցին դաստառ կարգած էր Պ. Խնտամե- անը. ներողութիւն, ըսել կուզեմ Պ. Պուլթրոսը . . .

Ամենայն դիւրութեամբ կրնամ հաստատել թէ վերջին 5-6 տարի. ներս ընթացին Գալտեան Ազգ. Վարժարանը շատ աւելի լաւ ար- դիւնք տուած է քան նախորդ տա- րիներու շրջանին մէջ և Պ. Պուլթ- րոսը հակառակ վարժարանին մէջ տի- րող ինչ մը անկարողութիւններու և խնչքաններու, կրցած է իր անխնայ ու անձնուէր աշխատութեամբ ար- դիւնաւորել. թէ և եթէ պարագա- ները նպատաւոր ըլլային՝ Պ. Պուլթ- րոսէն աւելի յուսալու իրաւուն- քը ունէինք :

Պ. Խնտամեան չի բաւականանար Պ. Պուլթրոսը իր ուսուցիչ ըննա- գատել, այլ կը համարձակի իր ք- մարդ զայն ներկայացնել խար- գայն, շահախնդի և հացկատակ մէկը երբ կրնէ՛ պարզապէս կը կա- շառուէր այդ անմիջապէս իր շա- հանով ուսուցիչը :

Պ. Խ. որքան յաւալի իր գա- տեւակերպով, այնքան գատապար- տելի է իր վարժարանը :

Արարեցին ուսուցիչն կարողա- թիւնը Պ. Ազնաւորի կողմանէ գնա- հատուիլ և ամսական յաւելուիլը կարճաժամէ կը նկատէ. իր այդ հա- մոզումը չ'ընկելու համար պիտի բա- ակնանամ ըսել թէ՛ 5-6 տարուան շրջանին մէջ՝ բացի յիշեալ յաւե- լումէն, Պ. Պուլթրոսը երկու անգամ ամսական յաւելում ունեցած է. մին Պ. Գիրքեցեանի՝ իսկ միւրը Պ. Թուրքեանի անօրհնութեանց ատեն. այս վերջինն՝ յաւելումէն զատ ունեցած է նաև երկու ամսական շնորհում (gratification) իր անխնայ ու անձնուէր աշխատութեանց փո- խարէն :

Արարեցին ուսուցիչն կարծուա- ծէն շատ աւելի անկախ ու անչա- հանգիւր մէկը ըլլալուն փաստերը ունենալով հանդերձ. Պ. Խնտամե- ան կը համարձակի զայն զբար- տել և անոր նախատական ու զըր- պարտիչ խօսքեր ուղղել :

Միթէ չի՞ մտածեր որ Պ. Պուլթ- րոսի պէս համարաւարտ գրագէտ-ու- սուցիչ մը հետեւեալն և պատուոյն արատ բերելու նպատակաւ փորձեր ընելը կրնայ գէշ հետեւանքներ ու- նենալ . . .

Ինչ պիտի ընէր Պ. Խնտամե- ան եթէ արարեցին ուսուցիչն ալ իր կարգին ելլեր (հայ ուսուցիչը սկսաւ) ու արարեցին լրագիրներու մէջ, որոնցմէ միայն այ խմբագրա- պետն է, պարտաւէր հայոց վարժա- րանը, արարեցին նախկին օգնա- կան-ուսուցիչը. վարժութիւնը և ինչ և իբր անկեղծեց-ծերանոց ներ- ծայացնելու մեր վարժարանը, և ոչ թէ կրնի միայն հաստատութիւն մը, ու այսպէսով ազգին արատ բերէր և մեծ scandale մը գործէր :

Ինչպէս պիտի պաշտպանէր ինքզինքը, եթէ պատույ զատ բա- նալու ըլլար իր դէմ և ոճրապատ ատենը զինքը պատապարտէր :

Անշուշտ եթէ արարեցին ու- սուցիչը հայերէն լեզուն ծանօթ ըլլար, Պ. Խնտամեան համարձա- կութիւնը պիտի չ'ունենար այդքան վիրաւորիչ և վտանգաւոր բառեր գործածել :

Տ Ա Ր Ե Վ Է Լ Ո Ս Է Ի Ա Յ Ի Ա Ր Կ Է Ն

ԹԵՐԹՈՆ « ԱՐԵՎԷԼՈՍ » Ի ԹԻՒ 10

ՀՈՎԻՏՈՒՄ (ԹԻՒ ԵՐԿՐՈՐԻ)

Օղին պատրաստ է. այդ շնական հանցքից հասնելէ առաջ հարկ է որ պիտի չ'ընթերցուի այս պող- պատեայ երկրորդ մատուցարանն համ- րուին . . . Սոսեցա Սիւրբ այնպիսի շահագրից խրոխտ ու վճական անա- կանգով մը՝ որուն մէջ կարելի էր կարողալ իր ներքին նպատակն ու Գե- ղոն յանձնելու տրեւոտ ձեւակերպու- թիւնը . . .

Գեղծ քաղ ըմբռնեց Արարի գիւ- ցազնական խօսքերը. իր հոգուոյն խո- բէն կը խօսեր, և արօշի վիզը սեղմող մատներու տակէն ազատ թողուց և զայնքը գոտիին մէջ խրեցնելէ յետոյ անմայն անշուշտ փամփուշտները հրա- ցանի ընդունարանին մէջ զետեղեց. թիթակը բացաւ. Արարի նայեցաւ. Սէյ- թուն ուղղակի ճակտէն գնդակահարելու համար հրամանի կսպասէր. ակնարկի մը լով :

Ճիշդպէս չ'իտեցաւ պահ մը. յետոյ գիտութեան թմբուծելէն խե- լարեցաւ և Սիւրբի պատասխանին թաքուն նշանակութիւնը ըմբռնելով կատարութիւնը իր հրէշի կերպարան- ցին անտեղի սառած մը ասած :

Կրակ, պոռոց բարկութեամբ փրփրած, կրակ կեպուցներու վրայ ու իր հրամայական ձայնին յաշորից փամփուշտները հպակցով տեւորելու մի շնորհոց : Կրակ Գեղո՛ւ, կրակ Սաջօ. Դա- րօ՛շ, արձագանգեց Սիւրբը. ու իր ձայ- նին հետ կրակի լեզուակներ սողակե- ցին օդին մէջ. գնդակները վզվզեցին մուկն ու ծուլը ամեն ինչ անտեսա- նելի դարձուցին, մինչ Դարօշը մէկ ու- սուտով Սէյթօի վրայ ցատկած և իր սրածայր սեղիք ճանկերը անոր կոկոր- դին խրած մահուան զրտինքով կը ճը- ուտանէր զայն :

Օղնութիւն. կը պոռար վատը խեղդով, հազիւ լսելի ձայնով. աւա՛ղ, սակայն, իր ակնաչիւն կը հասնէին հե- տըզեանէ վայ, ետա՛ն. աղապակներ ու հոգեւարքի խոխոցները գրեցմանի զօղանչի մը պէս տխուր, սրտառդիկ :

Թիկնապահ ծանուցելը կեպուց- ներու յարձակումէն այնքան մեծ ա- նակնակալի, անօրինակ իրողութեան մը գէ՛տ եկան որ շուտիցան, չկրցին չու- տով փամբուշտները ընդունարաններուն մէջ զետեղել և երբ ինքնամփոփուտով այդ գործողութիւնը կատարած՝ կրակե- լու կը պատասխանէին, կեպուցներու յաշորիցար տեղացող գնդակները մէկ- ուն թեւը ծակած միւսին սի՛րաը միտած ուրիշի մը ճակատը գամած էին :

Մի՛ խնայէք. զարկէ՛ք. շարքու- փշուր ըրէք, կարմիր օդին խնցուցեք

ըր չկարմրած հեռանանք այս վայրէն. վրանք հիւղակը, կորանցնենք հետքեր- նիս. ապա թէ ոչ թշնամներու զոր- հուրելի խուճի մը. վրէժխնդիր քիւր- ստերու զիմազրաւել պիտի ստիպուինք, մինչդէռ մենք սկսեցինք և փամփուշտ- նիս ալ գրեթէ սպասած. փակչի՛նք . . . խօսեցաւ հովուէնին չ'արիւնջով պարագա- յի ծանրակշռութիւնը եւ մտաբերելով անօրուտ, յիմար կորիւր գալիք թշնա- մինիւրուն հետ՝ որ իրենց մահով պիտի վերջանար :

Փակչի՛նք. ուրիշ միջոց չկայ. արձագանքեցին ամենքը միտանի :

Փակչի՛նք. որու թողուլ սակայն հօտը. եղեքը կողմը. այժմերն ու տու- արներն, ինչպէս տանիլ միտանի՛ երբ անոնց գանձող գնացնեն ու անգուցիլի մայրեն կամ բառաշիւնը կարող էին թշնամին մտանիլ զիրենք. Հոն թո- ղուլ. բայց ինչպէս զատուէին այնքան արարներու աշխատութեանց պտուղնե- րէն, ինչպէս հոտուէնին լքեր իր սի- րական նախիրն՝ որու մէն մի անգամ հմայքոտ պատմութիւն մ'ունէր, ինչ- պէս թողուլ. ինչպէս տանիլ ահա այս դաժան՝ սիրտ ըզտող մտածումներով ամենքն ալ կտանցան պահ մը :

Գիրքին էր արդարեւ հեռանալ մի- այնակ, փակչի՛նք. գտարու էր սակայն գտաւիլ անոնցմէ՝ որոնք յառաջ եկած մեծած էին կեանքի ուսուցատուով քրտինքով, տարիներու յոգնատանջ խնամքով և Փակչի՛նք վերջ անշուշտ տեղ մը, անորոշ վայր մը պիտի հաս- տատուէին, բայց քանի՞ քանի՞ երկար տարիներ հարկ պիտի ըլլար կրկին զանոնք ձեռք բերելու. նորէն հասցնե- լու համար և քրքա՛ն աշխատանք :

Նա միմիայն առիթէն օգտուե- լով՝ կուզէր հանրային կարծիքը ի նպաստ իրեն ունենալ. արդէն իր յօդուածը անպատասխան մնալով -ինչպէս առաջինը- յարթանակը գը- րեթէ տարած՝ իր ճարպիկ գրիչը և ունեցած բոլոր խորամանկութիւնը ի գործ կը գնէ համոզելու համար ժողովուրդը թէ՛ Ազգ. Գալտեան վարժարանի արարեցին արդի ու- սուցիչը թէ՛ անկարող է և թէ՛ ան- նկարագիր մէկն է. և միևնույն ա- տեն իբր յարմար ուսուցիչ ինքզինքը թեկնածու (candida) կը ներկայացնէ զպրոցական նոր շրջանին համար :

Թողու՛նք ամեն հակառակու- թիւն, քինական գիտ ոգի ու քիչ մ'ալ ազգ. վարժարանի մարտկեն- րուն օգտին համար աշխատիքը, անպատկառութեան բուն պատճառա- ները մտանանչել՝ ու անոնց հիմնա- կան դարձանի մասին խորհիլ :

Յուսալից ենք որ՝ Հոգաբար- ձութիւնները իրենց կարողութեան օւ կամ ուժով՝ վերջ պիտի տան զերկարակ Ազգ. Գալտեան վար- ժարանին մէջ սիրող կարգ մը անկա- նունութեանց :

Լաւ է ոչ քան երբէք : Նախկին աշակերտ Ազգ. Գա- լտեան վարժարանի՝ ԼԵՒՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

... ՄԻՐ. ԱՐԱՂԱՅԻՄԱՅ ՍԿԱՆ

Իրազրոյց ի Գանձիք Գալտեան ազգային որբանոցի Մայրն՝ Գրիտիէն Դայրապետ Փափազ- եան. իննամակալութեան անօրինու- նութեամբ և Պատրիարքական հրամա- նաւ ուղեւորած է յԵրզրայտոս, ստանա- լու համար տեղւոյն մերազնէից ինք- նարողիս նուէրներ, ի նպատակ Գալ- փատեան Որբանոցի. որու եկամտով հաստատուն աղբւրն լինելով ժողովրդ- եան ձեռնառութեան, որով կրնայ կանգուն մնալ Որբանոցի Մայրն՝ Ե- զրպտոսէ վերադարձին՝ իր այցելու- թեան մասին կարեւոր տեղեկութիւն- ներն հարողովով իննամակալութեան, յանձնեց նաև Որբանոցի սնունդին նուրբատուններու վաւերական գանկե- լուն հետ (*) հանցանակութեան ար- դիւնքը :

Գանձիքի ազգայիններէ 1883. 50

ՄԵԾ ՎԱՃԱՌՄԵՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎՍԿՀ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ անելի պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

ՍԵՓԱԿԱՆՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵՆՆԵՐ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀՅԱԼ Է .

ԼՈՅՍ ՏԵՍԻՒ ՊԱՏԿԵՐԱԳՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հոյակապ աշխատութիւն արժանացած բազմաթիւ գնահատական նախաձեռնումներու և ծրարներու և անմրցելի իւր տեսակներուն մէջ, Պատկերազարդ Անկլո-Հայ Փափագեան քառաբարձր պատրաստուած է մեծ խնամքով և զգուշացմամբ Նեպտիոն Պատկերազարդ Վեբսթերի անմեղմէրջին բառագրոց և զարգարուած է 800 ընտիր պատկերներով .

ՀՈՐԻԶՈՆ

Հրատարակուելու է մօտ աշխատակցութեամբ

ՀՈՐԻԶՈՆ

Հրատարակուելու է մօտ աշխատակցութեամբ

ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹՅՈՒՆ Ժ. ՆԱՅՏԻՆԵՐԻ

Պալատի փողոց . Խաչնէսարի սեփականութիւն , Պրիսթոյ Օթէյի ճիշտ դիմաց Գաֆէ Տր Լա Պուրսի կից



Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԸՐ յազակաշիւ

ՎԻՃԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նպաստ Աղքատախնամ Ընկերութեան

Table with 4 columns: Number, Name, Amount, Total. Includes numbers like 16777, 1830, 17894, 3584 and amounts like 8000, 800, 400, 400.

ՉՈՐՄ ԱՆԵՏԱՐԱՆՆԵՐԸ

ԱՐԳԱՍԱՌՈՒԹԻՒՆ Հեղինակ ԷՄԻՆ ԶՈՂԱ Թարգ . ԵՐ . ՕՏԵԱՆ

ՄԱՐՄԵԱՍԱՐԶ

Բաժնեգին Պօլիս և գաւառները տարեկան 20 դուրոշ Արտասահման 5 ֆրանք .

Հասցէ՝ Ա. Շ. Գրեքեան Ղալաթիա Հալէպ խան թիւ 6, Պօլիս .

ՍՈՒԼԹԱՆԻՅԷ

ԾԻՒԼՈՎ ՀԱՆԿԵՐԶ ԶՎԱՍՏՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՄԻՋՈՑԸ

ԱՂԱՏԱՄԱՐՏ

Բաժնեգին , տարեկան Պօլիս 75 դր . գաւառները 100 , ամերիկայ 6 տոլար , ուրիշ երկրները 30 ֆր .

ԱՐԵՒԵԼԲ

Բաժնեգին . Պօլիս 100 և գաւառները տարեկան մէկ ոսկի Ամերիկայ 6 տոլար . արտասահման 35 ֆր .

ՍՈՒՐԶԱՆԳՒՆ

Իրական , Բաղաճական , բասարական և Առևտրա-արդիւնաբերական անկուսակցական անկախ լրատուագիր

ՐԱԶՄԱՎԷՊ

Բաժնեգին 10 ֆր . 4 ռուբլի . տուր , 50 դր .

ՀԱՆԿԵՐԱԿԱՆ

Բաժնեգին և կանխիկ Տարեկան 15 մր = 6 Րուբլի Իրաւական թիւր 1,50 Էր . 70 կ .

ՏԱՐԱ ԱՊՏ ԷԼ ԱԶԻԶԻ ՊՈՂՈՏԱՅԻՆ ՎՐԱՅ

Գործերու , Թերթերու , Հանդէսներու , Պրոչիւրներու , Նախապաշտօններու , Անկյորներու , Վաճառականական սեփական , Այցեխարտերու , Մանագրեաներու , և Հայերէն , Անգլերէն , Թուրքերէն , Իտալերէն , Յունարէն , Արաբերէն լեզուներով սպագրական յանձնարարութիւններու հետեւ պէտք է դիմել ԱՐՏԱԼՈՅ Տարաւանք խնամուելու և անպակաս սպագրութիւն ունենալու համար .